# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի 23.05.2016 թ. նիստի

---

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետ՝ Ա.Ղահրամանյանի

ՀՀ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ա.Ղուկասյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության վարչության պետ՝ Վ.Մկրտչյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ՝ Հ.Հարությունյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ՝ Ա.Պողոսյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության պետ՝ Ա.Այվազյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

քաղաքաշինության վարչության պետ՝ Կ.Դանիելյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության գյուղատնտեսության բաժնի

պետ՝ Մ.Սարիբեկյանի

Գյուղատնտեսության աջակցության

Արմավիրի մարզային կենտրոնի տնօրեն՝ Լ.Ալեքսանյանի

ՀՀ Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած համայնքների ղեկավարների

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

**1. 2016 թվականի մայիսի 12-ին,18-ին և 23-ին քամու ուղեկցությամբ տեղի ունեցած տևական կարկտահարությունից տուժած ՀՀ Արմավիրի մարզի մի շարք համայնքներում ստեղծված իրավիճակի մասին**

/ Ա.Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը Հայաստանի Հանրապետության օրակարգային հարցի առնչությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նիստի մասնակիցներին տեղեկացրեց, որ 2016 թվականի մայիսի 12-ին, 18-ին և 23-ին քամու ուղեկցությամբ տեղի ունեցած տևական կարկտահարությունից նախնական տվյալներով տուժել են մարզի ընդհանուր թվով 22 (քսաներկու) համայնքների հողօգտագործող գյուղացիական

փնտեսություններ:Այսպես,ժամանակագրական առումով մայիսի 12-ին տեղացած կարկուտից տուժել են Լուկաշին և Նորավան,մայիսի 18-ին՝ Արգինա, Բագարան, Արմավիր ,Այգեշատ (Արմավիրի տարածաշրջան), Տանձուտ , Արտաշար ,Արևիկ և Ձարթոնք,իսկ մայիսի 23-ին՝Բերքաշատ, Շենավան, Գետաշեն, Նալբանդյան, Նոր Արտագերս, Արգավանդ, Ջանֆիդա, Փշատավան, Սարդարապատ, Արազա, Երասխահուն և Եղեգնուտ գյուղական համայնքների հողագործները:

Կատարված համապատասխան ուսումնասիրությունների դեռևս նախնական արդյունքներով որոշ համայնքներում ուժեղ քամիներից վնասվել են նաև պոլիէթիլենային թաղանթով պատված ջերմոցային տնտեսություններ:

Գյուղացիական տնտեսությունների մեծ մասը վարկառուներ են, ովքեր գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման նպատակով տարբեր բանկերից վարկեր են ստացել:Այդ առումով տուժած հողօգտագործողները ակնկալում են կառավարության աջակցությունը վարկերի մարումը երկարաձգելու կամ սառեցնելու ուղղությամբ:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը ակնկալեց,որ արդեն մայիսի 19-ից ձեռնարկված և ընթացող գործնական միջոցառումների արդյունքում համապատասխան ընթացակարգով և սեղմ ժամկետում կավարտվեն մարզի համայնքներում քամիների ուղեկցությամբ տեղի ունեցած կարկտահարության հետևանքով մարզի գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները և համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը մարզային հանձնաժողովում քննարկելուց հետո համաձայնեցված ակտերը և հասցված վնասների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվեն համապատասխանաբար արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողով և համապատասխան մարմիններ:

## Հանձնաժողովը որոշում է՝

1.Առաջարկել կարկտահարությունից տուժած համայնքների ղեկավարներին՝

ա/ թարմացնել ՀՀ Արմավիրի մարզպետի 17.02.2012 թ.N 60 որոշման 3-րդ կետի պահանջով համայնքներում ստեղծված արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովների կազմերը՝համայնքներում կարկտահարության պատճառով գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները կատարելու գործընթացը սկսելու նպատակով,

*բ/ համայնքային հանձնաժողովների ակտերը կազմել և մարզային հանձնաժողով ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կողմից մշակված և տրամադրվելիք ակտերի ու տեղեկատվական նյութերի ձևաչափերին համապատասխան:*

*գ/հնարավորինս սեղմ ժամկետում ավարտել մարզի նշված 22 համայնքներում ուժեղ քամու ուղեկցությամբ տեղի ունեցած կարկտահարության պատճառով գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները և համայնքային հանձնաժողովների կողմից համապատասխան ձևաչափերով կազմված ակտերն ու տեղեկատվական նյութերն ուղարկել մարզային հանձնաժողով՝ քննարկելու և համաձայնեցված ակտերն ու տեղեկատվական նյութերը համապատասխան մարմիններ ներկայացնելու նպատակով:*

*Հանձնաժողովի նախագահ՝* *Մ.Քարտաշյան*

*Հանձնաժողովի քարտուղար՝* *Դ.Դավթյան*